



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



«07» 03 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 056 - 25

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

Քաղաք Երևան, Միկոյան 13, բն. 42

Գործունեությունը՝

Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանգադյանի անվան
թիվ 6 հիմնական դպրոցի կառուցում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 056 - 25

« 07 » Մայրի 2025թ.

**Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ
6 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Լուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Գորիս քաղաք

Ներածական մաս. «Լուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գետափնյա փողոց 1 հասցեում 648 աշակերտի համար միջնակարգ դպրոցի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Գորիսի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. փետրվարի 28-ի N 9 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.8894 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գորիս քաղաքում՝ Գետափնյա 1 հասցեում: Դպրոցի նոր մասնաշենքերը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում՝ ապամոնտաժելով գոյություն ունեցող մասնաշենքերը: Նոր կառուցվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2959.0 մ²: Այն նախատեսված է 648 աշակերտների համար և բաղկացած է 6 մասնաշենքերից:

Գորիսի հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված գոյություն ունեցող հողամասի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ շինությունն էլեկտրական ենթակայան է եղած զոնայի քան 14 մ հեռավորության վրա: Մյուս շինությունները (ավտոտնակ, բնակելի տներ, միջին հարկայնության շենք) նույնպես գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից նորմատիվներով սահմանված հեռավորության վրա:



Դպրոցի մասնաշենքերը տեղադրված են թեք տեղանքում, առաջին և երկրորդ մասնաշենքերի առաջին հարկի հատակի նիշերը գտնվում են նույն մակարդակում և բարձր են շենքի սավաճքից մոտ 20-100 սմ-ով:

Տարածաշրջանը գտնվում է «ցուրտ» կլիմայական գոտում՝ զով ամառով և խիստ ցուրտ ձմեռով: Ձմեռը երկարատև է, կայուն ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Տարեկան միջին ջերմաստիճանը 9.2 °C է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 35.4°C, բացարձակ նվազագույնը՝ -20.4°C, օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 70%:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում ներկայացված է դիատոմիտային կավերով, լճային ավազներով, բազալտներով, տրավերտիններով, խճային և այլովիալ նստվածքներով: Ժամանակակից այլովիալ նստվածքները տեղադրված են Որոտանի ողողահունում, գետի ափամերձ շերտում: Տարածաշրջանն աչքի է ընկնում խիստ կտրտված լեռնային ռելիեֆով:

Դպրոցի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերին և կանոններին համապատասխան: Դպրոցի մասնաշենքերի կոնստրուկցիաները նախատեսված են մոնոլիտ երկաթբետոնե շրջանակներով, իսկ ծածկերը միաձույլ երկաթբետոնից՝ հիմնավորված համապատասխան հաշվարկներով: Սահմանազատող պատերը նախատեսված են երկշարք խարամաբետոնե բլոկներից, որոնց միջև նախատեսված է ջերմամեկուսիչ շերտ պեռլիտի սալերից կամ պոլիստիրոլից: Դպրոցի հիմքերի համար հիմնատակ են ծառայելու բազալտները, որոնց հզորությունը հասնում է 40 մ: Համաձայն գնահատման հաշվետվության՝ դպրոցի ճարտարապետական լուծումներում նախատեսված են սեյսմիկ կարաններով տարանջատված 6 մասնաշենքեր:

Առաջին մասնաշենքը երկհարկանի ադմինիստրատիվ-տեխնոլոգիական մասնաշենք է, որտեղ տեղակայված են լինելու ադմինիստրատիվ բնույթի սենյակները, բուժկետը, գրադարանը, ճաշարանը, որն անմիջապես կապված է ներքին բակի հետ, հանդիսությունների դահլիճը, համապատասխան սպասարկող միջանցքներով և սանհանգույցներով:

Երկրորդ և երրորդ մասնաշենքերը երկու ուսումնական եռահարկ մասնաշենքեր են, որտեղ նախատեսված են հիմնական դասասենյակները, միջանցքները, ռեկրեացիաները՝ պատշգամբներով:

Չորրորդ մասնաշենքը եռահարկ շինություն է, որտեղ տեղակայված են քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության դասասենյակներն իրենց լաբորատորիաներով, սպասարկող միջանցքները, պատշգամբներով ռեկրեացիաները և սանհանգույցները:

Հինգերորդ մասնաշենքը եռահարկ մասնաշենք է, որտեղ տեղակայված են արհեստանոցը, տնարարության դասասենյակը, ինչպես նաև հանդերձարաններ, սպասարկող միջանցքներ և սանհանգույցներ:

Վեցերորդ մասնաշենքը մեկ հարկանի է, որտեղ տեղակայված է լինելու սպորտդահլիճը (չափերը՝ 15x24մ): Սպորտդահլիճն անմիջապես կապված է բաց սպորտային հրապարակի հետ, ունենալու է օժանդակ տարածք, հանդերձարաններ, նախասրահ:

Դպրոցական համալիրն ունի ներքին բակ և հանգստի գոտի: Դեպի ներքին բակ են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները, այն անմիջապես կապված է նաև ճաշարանի մեծ սրահի հետ:

Հատակագծային լուծումներն ընդգրկել են դասասենյակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարություններն ըստ գործող նորմերի: Դասասենյակները գտնուրված են ըստ I-IV, V-VI և VII- IX դասարանի աշակերտների բաշխման:

Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալապահատակագծային բարդ ձև, ուստի մասնաշենքերը միմյանցից բաժանվում են ուսկասեյսմիկ կարաններով:



Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 0.8894 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 2959.0 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 2788 քմ,
- սպորտային խաղահրապարակներ՝ 299 քմ,
- ներքին բակ՝ 256 քմ
- բարեկարգման ընդհանուր տարածքը՝ 6738.3 քմ:

Նախագծով նախատեսվում է կառուցել նաև կաթսայատուն, իրականացվելու է տարածքի բարեկարգում, կանաչապատում, բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ, շվաքարաններ:

Դպրոցի տարածքում պահպանված են հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ պայմանները: Ապահովված է հրշեջ մեքենաների մոտեցման համար անհրաժեշտ ճանապարհները:

Դպրոցի մասնաշենքերը նախատեսվում է ջերմամեկուսացնել համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանալու է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով երրորդ մասնաշենքի դեպի հարավ ուղղված տանիքի շեպի վրա տեղադրվելու են ֆոտովոլտային փոխարկիչներ և տաք ջրամատակարարման արևային վահանակներ՝ 8 մ² տաքացման մակերեսով:

Դպրոցի տաք ջրամատակարարման համար օգտագործվելու է արևային էներգիան: Այդ նպատակով նախատեսված է տեղադրել 1000 Լ տարողունակությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումն իրականացվելու է կաթսայից և տանիքում տեղադրվող արևային ջրատաքացման համակարգից: Արևային վահանակների դիրքը նախատեսված է այնպես, որպեսզի բացառվի կողային տանիքի հնարավոր ստվերացումը: Կիրառվում է 13,9 կՎտ (փոփոխական 220 Վ) հզորությամբ ինվենտոր՝ 97% արդյունավետությամբ, որը կարող է աշխատել օդի -25 մինչև +60°C ջերմաստիճանների պայմաններում:

Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացման ցանց և հակահրդեհային սնուցող ցանց:

Ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսվում է մոնտաժել պողպատյա եռակցված խողովակներով, իսկ ներքին ցանցը՝ պոլիպրոպիլենե և պոլիէթիլենային խողովակներով: Սառը և տաք ջրամատակարարման համակարգերը կարգավորվելու են փականներով:

Արտաքին կոյուղու կառուցման և վերակառուցման աշխատանքները կատարվելու են գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան: Նախագծով նախատեսված է կենցաղային կոյուղու թողարկների կառուցում: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներով: Կոյուղաջրերը նախատեսվում է լցնել արտաքին կոյուղու ցանցի դիտահորեր, որից հետո դրանք կմիանան կոյուղու կենտրոնական համակարգին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Քանդման աշխատանքներով նախատեսվում է արտաքին պարուրող պատերի, ծածկի սալի, սյուների և հեծանների, հիմքերի քանդում: Նախատեսվում է ապամոնտաժել դպրոցի բոլոր մասնաշենքերը՝ 4793.2 մ² մակերեսով:



Քանդման աշխատանքներին զուգահեռ կազմակերպվելու է շինարարական աղբի կանոնավոր տեղափոխում, իսկ մինչև տեղափոխումն այն պահվելու է կառուցապատման տարածքում՝ ծածկված անթափանց թաղանթներով կամ փակ տարաների (կոնտեյներներ, պարկեր և այլն) մեջ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 5 տարի և 5 ամիս, որից 10.5 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող շինության ապամոնտաժման աշխատանքների համար:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և տեխնիկայով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 5000 տ շինաղբի տեսքով, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 19070 մ³ քանակով՝ ինչը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը՝ տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար խմելու կենցաղային ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (99 մարդ), ինչը կազմում է 3568 մ³/շին. ժամ: 3000 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 495 մ³/շին. ժամ: Ընդհանուր ջրօգտագործումն ամբողջ ժամանակահատվածի համար կազմում է՝ 4063 մ³/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Նախատեսվում է ծաղկանոցի և սիզամարգերի հիմնում: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում իրականացվելու է դպրոցի կողմից: Դպրոցի կանաչապատման տարածքը կազմում է 2788մ², տարածքում առկա 2 ծառերը պահպանվելու են:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության



պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,

- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվել է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում լանջափոխի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում, դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզադահլիճի կառուցման, բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:



Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու ուսումնական գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Գորիսի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Գորիս համայնքում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը: Ինչպես նաև պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Քանի որ կառուցապատման աշխատանքներն իրականացվելու են գործող դպրոցի տարածքում, խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակ բացառելու նպատակով:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներնը կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գորիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ


«Լուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան